# «ՌՈՔ ԿԱՊԻՏԱԼ» ԲԲԸ
# ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 26/05/08-001

## «ՌՈՔ ԿԱՊԻՏԱԼ» ԲԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

08 Մայիսի 2026թ.

Ղեկավարվելով «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ կանոնադրության 11.25 կետով՝ որոշում եմ.

1. Հաստատել «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ընկերության աշխատակից Արաքսյա Հարությունյանին հանձնարարել սույն որոշման ընդունման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել սույն որոշման մասին ընկերության բոլոր աշխատակիցներին և շահագրգիռ բոլոր հաճախորդներին տեղեկացումը, ինչպես նաև սույն որոշման հրապարակումը ընկերության պաշտոնական կայքում:
3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Ընկերության անվանման փոփոխությամբ պայմանավորված նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցման պահից, իսկ մյուս կետերն ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման պահից:
4. Սահմանել, որ սույն որոշման առաջին կետը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում «ԱՐՄԲՐՈԿ » ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի 16.07.2025թ-ի թիվ 25/07/16-001 որոշմամբ հաստատված «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները:

«ՌՈՔ Կապիտալ » ԲԲԸ
Գլխավոր տնօրեն

Արամ Կայֆաջյան

Հավելված 1
«ՌՈՔ Կապիտալ » ԲԲԸ գլխավոր տնօրենի
08.05.2026թ-ի թիվ 26/05/08-001 որոշման

# ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱԿԱԳՆԵՐ

| | |
|---|---|
| **I. Բրոքերային հաշվի սպասարկում** | |
| Հաշվի բացում | անվճար |
| Հաշվի սպասարկում | անվճար |
| Հաշվի փակում | անվճար |
| «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում հաշվի բացման միջնորդություն | անվճար |
| Հաշվին գումարի մուտքագրում | Անվճար |
| «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ից գումարի դուրսբերում ՀՀ դրամով հայաստանյան բանկերում բացված հաշիվների | Անվճար |
| «ՌՈՔ Կապիտալ » ԲԲԸ-ից գումարի դուրսբերում ՀՀ ռեզիդենտների կողմից հայաստանյան բանկերում բացված հաշիվների | Անվճար |
| «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ից գումարի դուրսբերում արտարժույթով | Գումարը կամ դրանով ձեռքբերված արժեթղթերը «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվների վրա մինչև մեկ տարի պահպանվելու դեպքում՝ դուրս բերվող գումարի 0.125-3%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ: |
| | Գումարը կամ դրանով ձեռքբերված արժեթղթերը «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվների վրա մեկ տարուց ավել պահպանվելու դեպքում՝ 100,000 ՀՀ դրամ: |
| «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ից գումարի դուրսբերում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի նախաձեռնությամբ բրոքերային հաշվի փակման կապակցությամբ | Անվճար |
| Հաշվից գումարի փոխանցում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ում սպասարկվող այլ հաշվի | Անվճար |
| Հաշվում առկա դրամական միջոցների պահպանում Ռուսաստանի դաշնությունում բացված Type-c տեսակի հաշիվների միջոցով | Ռուսաստանի դաշնությունում բացված Type-c տեսակի հաշիվների միջոցով հաշվառվող դրամական միջոցների գումարի 3% տարեկան |
| **II. Հայկական արժեթղթերով գործարքների կատարում** | |
| Բաժնային արժեթղթերով գործարքներ | Գործարքի ծավալի 0.3 – 1% նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ |
| Պարտքային արժեթղթերով գործարքներ | Գործարքի առարկա արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.05 - 0.1% , նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ |
| Ռեպո Գործարքներ | Գործարքի ծավալի 0.0008 % ռեպո գործարքի ժամկետի յուրաքանչյուր օրվա համար, նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ |
| **III. Արժութային փոխարկումների կատարում** | |

| | |
|---|---|
| արտաքին գործարքներ[1] | Գործարքի ծավալի 0.1-3.5%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ Հայաստանի ռեզիդենտների համար և 20,000 դրամ այլ երկրների ռեզիդենտների համար |
| **IV. Արտասահմանյան արժեթղթերով գործարքների կատարում[2]** | |
| Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսերը, ֆոնդերի փայերը և բաժնետոմսերի դեպոզիտար ստացականները) գործարքներ, որոնք շրջանառվում են կազմակերպված շուկաներում | գործարքի ծավալի 0.1-1%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ |
| Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսերը, ֆոնդերի փայերը և բաժնետոմսերի դեպոզիտար ստացականները) գործարքներ, որոնք չեն շրջանառվում կազմակերպված շուկաներում | գործարքի ծավալի 1%, նվազագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ |
| Պարտքային արժեթղթերով Գործարքներ | Գործարքի առարկա արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.05-1%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ |
| Օպցիոններով գործարքներ | Յուրաքանչյուր Օպցիոնի համար 400-800 ՀՀ դրամ, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ |

## Հատուկ նշումներ

- Սակագները ներառում են բանկերի, կարգավորվող շուկայի օպերատորի և հաշվարկաքլիրինգային համակարգի օպերատորի կողմից կիրառվող միջնորդավճարները, բացառությամբ հայկական պետական պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման աճուրդների ժամանակ միջնորդ բանկերին տրվող միջնորդավճարներից:
- Այս սակագները կիրառվում են, եթե «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի և հաճախորդի միջև այլ համաձայնություն առկա չէ:
- Հաճախորդների միջոցների նկատմամբ այդ միջոցները պահպանման համար բացված բանկային հաշիվները սպասարկող բանկերի կողմից տոկոսների հաշվեգրումից ստացվող եկամուտները, ինչպես նաև այդ հաշիվների սպասարկման հետ կապված ծախսերը կրում է «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն:
- Նույն պատվերի հիման վրա կնքված մեկից ավել գործարքների դեպքում նվազագույն սակագինը կիրառվում է մեկ անգամ բոլոր գործարքների միասնական ծավալի նկատմամբ:
- Եթե Հաճախորդի միջոցները վերադարձվում են այն հաշվին, որից ստացվել են և այն արժույթով, որով ստացվել են, ապա հաշվից գումարի դուրսբերման համար կիրառվում է նվազագույն սակագինը:
- Դեպոզիտար հավաստագրերով իրականացվող գործարքների դեպքում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն իրավունք ունի միջնորդավճարի հաշվարկի համար հիմք ընդունել հավաստագրի հիմքում ընկած արժեթղթի շուկայական/անվանական արժեքը:
- Սույն սակագները կիրառվում են, եթե գործարքի վերջնահաշվարկը կատարվելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի միջոցով: Վերջնահաշվարկը այլ դեպոզիտարիաների միջոցով իրականացվելու դեպքում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն իրավունք ունի կիրառել հավելավճարներ, որոնց արդյունքում հաճախորդից գանձվող միջնորդավճարը կարող է կազմել մինչև 1,000,000.00 ՀՀ դրամ:
- Արժութային փոխարկումների կատարման սակագինը չի կիրառվում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից Հաճախորդներին վճարված շահութաբաժինների կամ տոկոսային եկամուտների փոխարկման նկատմամբ:
- Սույն սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից:

[1] «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կամ հաճախորդի անունից եվ հաճախորդի հաշվին երրորդ անձանց հետ կնքված գործարքներ:

[2] Ներառում է նաև հայկական թողարկողների կողմից թողարկած եվրոպարտատոմսերը

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| **I. Ներդրումային բանկային Ծառայություններ*** | |
| | |
| Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում | Պայմանագրային (կախված ծառայության էությունից և բարդությունից) |
| Արժեթղթերի փակ տեղաբաշխում | |
| Արժեթղթերի տեղաբաշխման հատ կապված այլ ծառայություններ | |
| **II. Խորհրդատվություն** | |
| Խորհրդատվական ծառայություններ | Պայմանագրային (կախված ծառայության էությունից և բարդությունից) |

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

| | |
|---|---|
| **I. Դեպո հաշվի բացում և սպասարկում** | |
| Հաշվի բացում | Անվճար |
| Հաշվի փակում | Անվճար |
| Հաշվի սպասարկում հայկական արժեթղթերի համար | Կիրառվում է «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման ծառայության համար սահմանված դրույքաչափը և վճարման կարգը |
| Հաշվի սպասարկում արտասահմանյան բաժնային արժեթղթերի համար | Հաշվում առկա արժեթղթերի շուկայական արժեքի 0.1-1% (տարեկան) |
| Հաշվի սպասարկում արտասահմանյան պարտքային արժեթղթերի համար | Հաշվում առկա արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.1-1% (տարեկան) |
| Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի արգելափակում | Անվճար |
| Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի արգելափակման դադարեցում | Անվճար |
| Արժեթղթերի մուտքագրում հաշվին հայկական արժեթղթերի համար | Անվճար |
| Արժեթղթերի մուտքագրում հաշվին արտասահմանյան բաժնային արժեթղթերի համար | Հաշվին մուտքագրվող արժեթղթերի շուկայական արժեքի 0-3%, նվազագույնը՝ 200,000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի մուտքագրում հաշվին արտասահմանյան պարտքային արժեթղթերի համար | Հաշվին մուտքագրվող արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0-3%, նվազագույնը՝ 200,000 ՀՀ դրամ |
| **II. Արժեթղթերի փոխանցում** | |
| Արժեթղթերի փոխանցում հաճախորդի նախաձեռնությամբ հայկական բաժնային արժեթղթերի համար | Փոխանցվող արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքի 0.1-0.5%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից |
| Արժեթղթերի փոխանցում հաճախորդի նախաձեռնությամբ հայկական պարտքային արժեթղթերի համար | Փոխանցվող արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.1-0.5%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից |
| Արժեթղթերի փոխանցում հաճախորդի նախաձեռնությամբ արտասահմանյան բաժնային արժեթղթերի համար | 100,000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի փոխանցում հաճախորդի նախաձեռնությամբ արտասահմանյան պարտքային արժեթղթերի համար | 100,000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի փոխանցում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի հետ կնքված բրոքերային (դիլերային) գործարքի արդյունքում | Անվճար |

| | |
|---|---|
| **III. Արժեթղթերի դուրսգրում** | |
| հաճախորդի նախաձեռնությամբ արժեթղթերի դուրսգրում՝ հայկական բաժնային արժեթղթերի համար | Դուրսգրվող արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից |
| հաճախորդի նախաձեռնությամբ արժեթղթերի դուրսգրում՝ հայկական պարտքային արժեթղթերի համար | Դուրսգրվող արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից |
| հաճախորդի նախաձեռնությամբ արժեթղթերի դուրսգրում՝ արտասահմանյան բաժնային արժեթղթերի համար | Արժեթղթերը կամ արժեթղթերը գնելու համար նախատեսված դրամական միջոցները «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվներին մուտքագրվելու պահից մեկ տարվա ընթացքում դուրսգրման դեպքում դուրսգրվող արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքի 0.0625-1.5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ |
| | Արժեթղթերը կամ արժեթղթերը գնելու համար նախատեսված դրամական միջոցները «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվներին մուտքագրվելու պահից մեկ տարի հետո դուրսգրման դեպքում՝ 100,000 ՀՀ դրամ |
| հաճախորդի նախաձեռնությամբ արժեթղթերի դուրսգրում՝ արտասահմանյան պարտքային արժեթղթերի համար | Արժեթղթերը կամ արժեթղթերը գնելու համար նախատեսված դրամական միջոցները «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվներին մուտքագրվելու պահից մեկ տարվա ընթացքում դուրսգրման դեպքում դուրսգրվող արժեթղթերի անվանական արժեքների հանրագումարի 0.0625-1.5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ |
| | Արժեթղթերը կամ արժեթղթերը գնելու համար նախատեսված դրամական միջոցները «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի կողմից վարվող հաշիվներին մուտքագրվելու պահից մեկ տարի հետո դուրսգրման դեպքում՝ 100,000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի դուրսգրում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի հետ կնքված բրոքերային (դիլերային) գործարքի արդյունքում | անվճար |
| Արժեթղթերի դուրսգրում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի նախաձեռնությամբ դեպո հաշվի փակման կապակցությամբ | անվճար |
| **IV. Արժեթղթերի արգելադրում** | |
| Արժեթղթերի առևտրային արգելադրում | անվճար |

| | |
|---|---|
| Արժեթղթերի ոչ առևտրային արգելադրում հաճախորդի նախաձեռնությամբ | Արգելադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից |
| Արժեթղթերի ոչ առևտրային արգելադրում դատարանի վճռով | անվճար |
| **V. Արժեթղթերի արգելադրման դադարեցում** | |
| Արժեթղթերի արգելադրման դադարեցում հաճախորդի նախաձեռնությամբ | անվճար |
| Արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցում արժեթղթերի վաճառքի արդյունքում | անվճար |
| Արժեթղթերի արգելադրման դադարեցում արգելադրման ժամկետը լրանալու կապակցությամբ | անվճար |
| Արժեթղթերի արգելադրման դադարեցում դատարանի վճռով | անվճար |
| **VI. Արժեթղթերի գրավադրում և գրավադրման դադարեցում** | |
| Բաժնային արժեթղթերի գրավադրում | գրավադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից |
| Պարտատոմսերի գրավադրում | գրավադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.02%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 600,000 ՀՀ դրամից |
| Արժեթղթերի գրավադրման դադարեցում | անվճար |
| **VII. Տեղեկատվության տրամադրում** | |
| Դեպո հաշվից քաղվածքի տրամադրում | անվճար |
| Դեպո հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրում | անվճար |
| Հաճախորդին ամսեկան հաշվետվության տրամադրում | անվճար |
| Հաճախորդին ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով արտահանվող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում | անվճար |
| Հաճախորդին ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով չարտահանվող այլ տեղեկությունների վերաբերյալ տիպայինտեղեկանքի տրամադրում | 20,000 ՀՀ դրամ |
| Հաճախորդին մասնագիտացված թարգմանչի կողմից թարգմանված կամ նոտարի կողմից վավերացված քաղվածքի, հաշվետվության, ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով արտահանվող տեղեկանքի կամ ծրագրային համակարգից | 50,000 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| ինքնաշխատ կերպով չարտահանվող տիպային տեղեկանքի տրամադրում | |
| Հաճախորդին ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով չարտահանվող այլ տեղեկությունների վերաբերյալ ոչ տիպային տեղեկանքի տրամադրում | 100,000 ՀՀ դրամ |
| Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված այլ անձանց կողմից ներկայացված հարցումների վերաբերյալ պատասխանի ներկայացում | Անվճար, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ: |
| **VIII. Գլոբալ գործողություններ** | |
| Արժեթղթերի փոխարկում | անվճար |
| Արժեթղթերի մարում | անվճար |
| Արժեթղթերի բաժանում | անվճար |
| Արժեթղթերի համախմբում | անվճար |
| Թողարկողի և արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունների գրանցում | անվճար |
| Գլոբալ գործողությունների իրականացում Հաճախորդի հանձնարարությամբ | 100,000 ՀՀ դրամ, որը չի ներառում գլոբալ գործողությունների հետ կապված ծախսեր |
| **IX. Այլ ծառայություններ** | |
| Արժեթղթերի դիմաց եկամտի հաշվարկում և ստացում | պայմանագրային |
| Սեփականատերերի շահերի ներկայացում | պայմանագրային |
| Լրացուցիչ ծառայություններ | պայմանագրային |

Հատուկ նշումներ

- Եթե կոնկրետ ծառայության համար այլ բան նշված չէ, ապա ծառայությունների այս խմբի սակագները ներառում են ծառայությունների մատուցմամբ պայմանավորված երրորդ անձանց (ռեեստրավարներ, պահառուներ, բանկեր և այլն) կողմից գանձվող վճարները, սակայն եթե այդ վճարների մեծությունը գերազանցում են սակագներով հաշվարկված գումարներին, ապա «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն իրավասու է հաճախորդից գանձել նաև այդ գերազանցող մասը:
- Այս սակագները կիրառվում են, եթե «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Սակագնի հաշվարկման համար արժեթղթերի շուկայական արժեքը որոշվում է Ընկերության սահմանած մեթոդիկայով:
- Հաշվի սպասարկման վճարը հաշվարկվում է ամսական պարբերականությամբ յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվին առկա արժեթղթերի հիման վրա և «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի հայեցողությամբ գանձվում է եռամսյակային կամ ամսեկան պարբերականությամբ
- Հաշվում դեպոզիտար հավաստագրերի առկայության դեպքում «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն իրավունք ունի միջնորդավճարի հաշվարկի համար հիմք ընդունել հավաստագրի հիմքում ընկած արժեթղթի շուկայական/անվանական արժեքը:
- Տիպային տեղեկանքների ցանկը սահմանվում է «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից:
- Հաճախորդին պատկանող արժեթղթերով գլոբալ գործողությունների հետ կապված ծախսեր առաջանալու դեպքում դրանք ենթակա են փոխհատուցման Հաճախորդի կողմից:
- Սույն սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից:
- Սույն սակագները կիրառվում են, եթե գործարքի վերջնահաշվարկը կատարվելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի միջոցով: Վերջնահաշվարկը այլ դեպոզիտարիաների միջոցով իրականացվելու դեպքում

«ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ն իրավունք ունի կիրառել հավելավճարներ, որոնց արդյունքում հաճախորդից գանձվող միջնորդավճարը կարող է կազմել մինչև 1,000,000.00 ՀՀ դրամ:

# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

| | |
|---|---|
| **I. Արժեթղթերի փաթեթի կառավարում հաճախորդի ակտիվ ներգրավվածությամբ** | |
| Կառավարման պարգևավճար | Կառավարման ենթակա ակտիվների շուկայական արժեքի 0.25-1% (տարեկան) |
| Բարձր կատարողականի պարգևավճար | Կառավարման արդյունքում ձևավորված շահույթի 0% |
| **II. Արժեթղթերի փաթեթի կառավարում հաճախորդի պասիվ ներգրավվածությամբ** | |
| Կառավարման պարգևավճար | Կառավարման ենթակա ակտիվների շուկայական արժեքի 1.5% (տարեկան) |
| Բարձր կատարողականի պարգևավճար | Կառավարման արդյունքում ձևավորված շահույթի 15% |
| **III. Փաթեթի կառավարումից ակտիվների դուրսբերում** | |
| Կառավարումից ակտիվների դուրսբերման վճար | Կառավարման առաջին տարվա ընթացքում՝ դուրս բերվող ակտիվների շուկայական արժեքի 5% |
| | Կառավարման երկրորդ տարվա ընթացքում՝ դուրս բերվող ակտիվների շուկայական արժեքի 1% |
| | Կառավարման երրորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա ընթացքում՝ անվճար |
| **IV. Փաթեթի կառավարման հանձնվող ակտիվների նվազագույն ծավալ** | |
| Փաթեթի կառավարման հանձնվող ակտիվների նվազագույն ծավալ | 100,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթ |

**Հատուկ նշումներ**

- Ծառայությունների այս խմբի սակագները չեն ներառում ծառայությունների մատուցմամբ պայմանավորված երրորդ անձանց (ռեեստրավարներ, պահառուներ, միջնորդներ, բանկեր և այլն) կողմից գանձվող վճարները:
- Այս սակագները կիրառվում են, եթե «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Կառավարման պարգևավճարները հաշվարկվում է ամսական պարբերականությամբ յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ կառավարման ենթակա ակտիվների շուկայական արժեքի հիման վրա և «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի հայեցողությամբ գանձվում է եռամսյակային կամ ամսեկան պարբերականությամբ:
- Սակագնի հաշվարկման համար արժեթղթերի շուկայական արժեքը որոշվում է Ընկերության սահմանած մեթոդիկայով:
- Սույն սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից: